ՎԱՍԱԼԱ-ՍՅՈՒԶԵՐԵՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ X—XI ԴԴ.

ՌԱՖԱՅԵԼ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

IX դ. վերջում հայ ժողովուրդը տապալեց արաբական լուծը և վերականգնեց իր պետականությունը։ Հայաստանում առաջ եկավ քաղաքական կազմավորում՝ Հայոց թագավորությունը, ուր գերագույն իշխանությունը պատկանում էր Բագրատունյաց տոհմի Շիրակ—Արշարունիքի ճյուղին։ Այդ կարևոր իրադարձությունները տեղի էին ունենում այնպիսի ժամանակաշրջանում, երբ ֆեոդալական հասարակությունը Հայաստանում թևակոխել էր զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանը, ուր տոհմական հողատիրությունը փոխարինվել էր անհատ ֆեոդալների բաժնետիրական հողատիրությամբ[1]։ Հողատիրական իրավունքի մեջ տեղի ունեցած այդ տեղաշարժերն էական փոփոխություններ էին առաջ բերել վասալա-սյուզերենական հարաբերությունների համակարգում։ IX դ. Հայաստանում նորից ձևավորվել էր ֆեոդալական սանդուղքը, որի ներսում Արշակունյաց շրջանի համեմատ տեղի էին ունեցել որակական վերադասավորումներ. տանուտերերին փոխարինել էին գահերեց իշխանները, իսկ ասպարեզից հեռացած Արշակունիների տեղը գրավել էին Բագրատունիները։

Բագրատունյաց պետության գահակալների իրական ուժի ու զորության մասին հայ պատմագիտության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք հակադիր տեսանկյուններից են պատասխանել այդ հարցին՝ կա՛մ նրանց համարել են բացարձակ միապետներ, կա՛մ գիտել որպես ձևական թագակիրներ։ Խնդրո առարկա հարցին բավարար պատասխան տալու համար անհրաժեշտ է վերլուծել IX—XI դդ. Հայաստանի ֆեոդալական հասարակության ներսում գործող հիմնական ինստիտուտները, առաջին հերթին ժառանգական խոշոր հողատիրությունը և վասալիտետը։ Ինչ վերաբերում է առաջինին, ապա նախորդ մասնագետների հետազոտություններում այդ պրոբլեմը հետազոտվել է անհրաժեշտ խորությամբ և պարզաբանվել, որ IX դ. Հայաստանում արմատավորվել էր ժառանգական խոշոր հողատիրությունը, ֆեոդալները գավառներին և նահանգներին տիրել են մասնավոր սեփականատիրական իրավունքով, որի շնորհիվ նրանք կալվածքների ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական տերերն են եղել։ Խոշոր ֆեոդալների տնտե-

---

[1] А. Сукиасян, Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма, Ереван, 1963, стр. 62, 104, 197, *Հ. Բումանյան, Հայաստանի անտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960, էջ 62, 105, 107, Բ. Առաքելյան, ժառանգական խոշոր հողատիրության հետագա զարգացումը («Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 166)։*

սական հզորությունն ու անկախությունը ժառանգական տիրույթների սահմաններում քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերելու հիմք է հանդիսացել[2]։ Մյուս ինստիտուտը՝ վասալիտետը, առայժմ քիչ է ուսումնասիրված։ Ընդհանուր առմամբ այն դիտվում է որպես վասալ իշխանների պարտականությունների ամբողջություն թագավորի հանդեպ (զինվորական ծառայություն, պաշտոնավարություն, հավանաբար նաև հարկատվություն), այնինչ վասալիտետի դերն ու նշանակությունը շատ ավելի լայն էր, քանի որ ֆեոդալիզմի ժամանակ վասալա-սյուզերենական կապերի վրա էր խարսխված հասարակության քաղաքական կառուցվածքը։ Այդ իսկ պատճառով IX—XI դդ. սկզբնաղբյուրների ընձեռած նյութի սահմաններում ցանկանում ենք հատուկ անդրադառնալ վերոհիշյալ ինստիտուտին։

IX դ. վերջում Հայաստանում ամենաազդեցիկ ֆեոդալն էր իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, որը 885 թ. դարձավ Հայոց թագավոր։ Նա էր գլխավորում ֆեոդալական սանդուղքը և երկրի բոլոր խոշոր ու մանր իշխանական տները ճանաչում էին նրա գերադասությունը։ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, «ամենեքեան դաշինս ընդ նմա դնէին՝ որպէս արդարև ընդ թագաւորական զարմի», իսկ Աշոտի եղբայր սպարապետ Աբասը աջակցում էր նրան և «զամենեսեան հնազանդէր ընդ լծով ծառայութեան»[3]։ Դրասխանակերտցու գործածած «դաշինք» և «ծառայություն» բառերը արտահայտում են դաշնակցությունը թագավորական իշխանության և ֆեոդալների միջև, այլ կերպ ասած՝ տվյալ ժամանակաշրջանի գերադաս և ստորադաս ֆեոդալների միջև եղած սյուզերենական-վասալական կապը։

Դեռ վաղ միջնադարում «ծառայութիւն» էին կոչվում վասալների զինվորական և այլ տիպի պարտականությունները սենյորի հանդեպ[4]։ IX—XI դդ. այդ տերմինը պահպանել էր իր սոցիալական բովանդակությունը։ Այդ շրջանում ֆեոդալների վասալական պարտականություններն արտահայտվել են «ծառայութիւն», «հարկ ծառայութեան», «ծառայական սպասավորութիւն», «վարձ ծառայութեան», «մտերմական ծառայութիւն» բառերով[5]։ Ծառայությունը կատարվում էր կողմերի միջև կնքված համաձայնագրի հիման վրա,

---

2 Վ. Բարխուդարյան, Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում 9—11 դդ. (թեկնածուական դիսերտացիա), Երևան, 1954, էջ 61—63, 163, Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 165—172, Նույնի՝ Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 37—41, Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 105—125, Հ. Ութմազյան, Սյունիքը IX—X դդ., Երևան, 1959, էջ 127—136, Հ. Հարությունյան, Հայաստանը 9—11 դդ., Երևան, 1959, էջ 127—136, С. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма («Вопросы истории», 1951, № 7, стр. 60—61).

3 «Յովհաննու՝ կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 133, 135։

4 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 459, 470, А. Сукиасян, նշվ. աշխ., էջ 202, 207, Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 45, 60։

5 «Թովմայի վրդ. Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», ՍՊԲ, 1887, էջ 235—236, 239, 278—279, Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 161, 173, 206, 209—210, 291—292, 295, «Պատմութիւն Անանուն ղրուցադրի կարծեցեալ Շապուհ Բագրատունի», Երևան, 1971, էջ 171, 197, «Մատթէոս Ուռհայեցւոյ ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 79։ Այլ կերպ վասալի ծառայությունը կոչվում էր «միամիտ հնազանդութիւն» (Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 171, 173, 291)։

որը հայկական աղբյուրներում կոչվում էր «դաշինք» կամ «ուխտ»[6]։ Նման «դաշինքներով» կողմերի միջև հաստատվում էր «միաբանութիւն»[7]։ Համաձայնագիր՝ «դաշինք» կամ «ուխտ» կազմելիս գրվում էր «երդման» թուղթ, ուր իշխանն ու վասալը շարադրում էին իրենց պարտականությունները։ «Ուխտ» կազմելու մանրամասները պատմիչներից ոչ մեկը, ցավոք, չի նկարագրել։ Ըստ երևույթին այն ուղեկցվել է ծիսական բնույթի արարողությամբ, ինչպես այդ մասին ակնարկում է Դրասխանակերտցին, մի հակիրճ վկայությամբ։ 922 թ. Աշոտ Երկաթը (914—929) ընդհարվել էր իր վասալ, իշխան Սահակ Սևադայի հետ, որը ոմանց չարախոսությունից դրդված, ըմբոստացել էր թագավորի դեմ։ Երկուսն էլ պատրաստվել էին կռվի, բայց իշխանների միջնորդությամբ ճակատամարտը կանխվել էր։ Ապա, գրում է պատմիչը, «բաղում ուխտ երդմանց գրով կնքեալ տան իրերաց քրիստոսադիր կիտին և միջնորդութեամբ սրբոյ նշանի խաչին»[8]։

Երդման թուղթ ունեցող ֆեոդալներից Դրասխանակերտցին հիշատակում է նաև Գեղարքունիքի իշխան Վասակ Սյունեցուն։ Վերջինս ինչ-որ առիթով պետք է ներկայանար արքային (Աշոտ Երկաթին), բայց երկյուղում է և պահանջում «երդման» երաշխիք։ Կաթողիկոսի միջնորդությամբ ստանալով անհրաժեշտ երաշխիքը, Վասակը ժամանում է Աշոտի մոտ, բայց շուտով թագավորի կասկածամտության պատճառով բանտարկվում է Կայան բերդում։ Այդ արարքի համար կաթողիկոսը կշտամբում է թագավորին՝ «վասն ստելոյ ուխտին երդման»[9]։

Պատմիչի այս խոսքերից պարզվում է, որ Գեղարքունիքի իշխան Վասակը, Սահակ Սևադան և Աշոտ Երկաթը կնքել էին «երդման ուխտ»՝ պայմանագիր, որը հաստատվել էր երդումով։ Ֆեոդալիզմի ընդհանուր պատմությունից հայտնի է, որ սենյորի ու վասալի հարաբերությունները կարգավորվում էին հատուկ պայմանագրով, ըստ որի սենյորը վասալի զինվորական ծառայության դիմաց պետք է հովանավորեր և պաշտպաներ նրան։ Պայմանագրի կնքումը ուղեկցվում էր հանդիսավոր արարողությամբ, որը կոչվում էր «օմաժ» (hommage) և լրացվում էր երդումով՝ «ֆուա» (foi). գրվում էր նաև հատուկ հրովարտակ[10]։ Դրասխանակերտցուց վերը մեջբերած տողերից երևաց, որ X դ. Հայաստանում վասալական պայմանագրի կնքումը նույնպես ուղեկցվել է արարողությամբ. գրվել է հատուկ թուղթ, որ հաստատվել է երդումով։ Ուխտի հիման վրա սենյորի և վասալի միջև հաստատված կապը Դրասխանակերտցին անվանում է «միաբանութիւն»։ Նա գրում է, որ Սյունյաց մեծ իշխան Սմբատը չընդառաջեց Ատրպատականի Ավշին ամիրայի առաջարկին և չուզեց խախտել միաբանությունը Հայոց արքայի հետ[11]։ Միաբա-

---

6 Ատրպատականի ամիրա Ավշինը Վասպուրականի իշխան Աշոտ Արծրունուն առաջարկել էր «Դաշինս ուխտի» (Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 273)։ Նույն դեպքի մասին Հովհաննես Դրասխանակերտցին գրում է, որ Աշոտը «երփեղկեաց դաշինս ուխտիս», որն ուներ Սմբատ Ա Բագրատունու հետ և գնաց Ավշինի մոտ (էջ 171, 173)։ Տե՛ս նաև՝ Մ ա տ թ ե ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 51։ Վասալական ծառայության պայմանագիրը կոչվում էր «ուխտ» նաև Արշարունյաց շրջանում (Н. А д о н ц. Նշվ. աշխ., էջ 469)։

7 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 172, 269։

8 Նույն տեղում, էջ 307, 313։

9 Նույն տեղում, էջ 305։

10 «Советская историческая энциклопедия», т. 2, стр. 1004; т. 10. стр. 553.

11 Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 172։

նության խախտումը կնշանակեր մերժել «խնամոցն հայրաբան սիրոյն»[12]։ Խնամողը տվյալ դեպքում սենյորն էր, որը X—XI դդ. հայկական աղբյուրներում անվանվում է «հայր», իսկ նրա վասալը՝ «սիրելի որդի»։

Վասալը դերադաս ֆեոդալի մոտ մտնելով ծառայության, պարտավորվում էր սիրել նրան «որպէս հօր հարազատի», իսկ սենյորը իր հերթին պարտավորվում էր խնամել նրան որպես «որդւոյ սիրելւոյ»։ Վերը բերված օրինակում, Սմբատ Ա-ն (890—914) Սյունյաց Սմբատ իշխանին հավատարմության համար ընդունում է որպես «որդի սիրելի» և նրան մեծ պատիվներ տալիս։ Աշոտ Երկաթը ևս Սևադայի երկրորդ խռովության ժամանակ, երբ վերջինս գրաված էր Զորոփոր գավառի բերդերը (Կայան և այլն), փորձում է հաշտվել նրա հետ և պահանջում վերադարձնել գրաված ամրոցները, որպեսզի «եղիցի միաբարար խաղաղութիւն ի մէջ մեր՝ որպէս հօր հարազատի և որդւոյ սիրելւոյ»[13]։

Շատ հստակ է արտահայտված այդ կապը Ասողիկի մոտ։ 1001 թ. Գագիկ Ա-ի դեմ ըմբոստացած և պարտված Դավիթ Անհողինը հնազանդվում է շահնշահին և պարտավորվում է ենթարկվել Գագիկին՝ «իբրև որդի առ հայր», իսկ արքան իր հերթին պարտավոր էր «հայրենի խնամով սիրել զնա»[14]։

Եթե վասալ ֆեոդալների նկատմամբ թագավորը «հայր» էր, ապա թագավորական ընտանիքի մյուս անդամների՝ իր եղբայրների և մյուս մերձավոր ազգականների նկատմամբ, որոնց Դրասխանակերտցին անվանում է «արքունի տան գահերեցներ», «հայրագլուխ»[15] էր։ Բագրատունի մյուս տոհմակից իշխանների համար Հայոց թագավորը միաժամանակ նաև «ազգապետ» էր[16]։

Այսպիսով, աղբյուրները վկայում են, որ Հայոց թագավորության շրջանակներում (իսկ 862—885 թթ. նաև Բագրատունի իշխանաց իշխանի իրավասության սահմաններում) հայ ֆեոդալներն ուխտերով (վասալական պայմանագրերով) համախմբված էին Բագրատունիների ավագ տոհմաճյուղի՝ Շիրակ-Արշարունիքի գահերեցների շուրջը։ Աղբյուրները վկայում են, որ իշխանները կատարում էին համաձայնագրերից բխող իրենց պարտականությունները՝ զինապարտությունն ու պաշտոնավարությունը։ Այսպես, Միջագետքի ամիրա Ահմադի դեմ պատերազմելիս Սմբատ Ա-ի բանակում կային բազմաթիվ հայ իշխաններ, իրենց ջոկատներով[17]։ Նույնը եղավ 894 թ. Դողսի և 910 թ. Զկնավաճառի ճակատամարտերի ժամանակ[18]։ Շապուհ Բագրատունուն վերագրվող երկի հեղինակը Սմբատ Ա-ի բանակում հիշատակում է բազմաթիվ իշխանական տների ներկայացուցիչների[19]։ X դ. 30-ական թվական-

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում, էջ 172, 311։

14 «Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885. էջ 280, տե՛ս նաև Թովմա Արծրունի. էջ 279, Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 135, 140, 172, 200, 285, Կարծեցյալ Շապուհ Բագրատունի, էջ 191, Մատթեոս Ուռհայեցի, էջ 49, 83։

15 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 143, «Մանր ժամանակագրություններ», հ. 2, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501։

16 Մատթեոս Ուռհայեցի, էջ 84։

17 Թովմա Արծրունի, էջ 237, Կարծեցյալ Շապուհ Բագրատունի, էջ 173, 175։

18 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 218, Ասողիկ, էջ 164։

19 Կարծեցյալ Շապուհ Բագրատունի, էջ 189։

ների վերջում, արաբական ամիրաներից մեկի դեմ հարձակման ժամանակ Արաս Բագրատունուն (929—953) օգնության հասավ Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորը[20]։ Առավել պերճախոս է Աշոտ Գ-ի (953—977) գլխավորած հայկական բանակի կազմը, որը 974 թ. Զմշկիկ կայսեր արշավանքի պատճառով մտել էր Հարք։ Նրա կազմում էին «ամենայն ազատքն և իշխանքն և ամենայն մեծամեծքն աշխարհաց», այդ թվում Վասպուրականի, Սասունի, Տաշիրի, Անձևացյաց, Կապանի, Կարսի իշխաններն ու թագավորները[21]։ Ասողիկի վկայությամբ, Սմբատ Բ-ի (977—990) բանակում էին Վասպուրականի, Կարսի, Սյունյաց, Տաշիրի թագավորների և իր եղբայր Գագիկի զորամասերը[22], իսկ Գագիկ Ա-ի բանակում՝ կարսեցիների, Պահլավունիների և ընդհանրապես «զամենայն զորքն Հայոց»[23]։

Վասալի կողմից պարտականությունների խախտման և ընդհանրապես անհնազանդության դեպքում Հայոց թագավորները դիմում էին պատժիչ միջոցների։ IX—XI դդ. պատմությունից հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ արքաներն «ուխտը» խախտելու համար պատժում էին իրենց վասալին։

Աշոտ Երկաթը պատժեց (կուրացրեց) Սահակ Սևադային և Մովսես իշխանին[24]։ Վանանդ գավառի հայրենատերերի (Սահակ Մլեհի) խռովությունը ճնշեց Աշոտ Ա-ի եղբայր սպարապետ Աբասը, իսկ նրանց կալվածքները բռնագրավվեցին հարքունիս[25]։ 1001 թ. Գագիկ Ա-ն պատժեց Դավիթ Անհողինին և նրա տիրույթների մի մասը՝ Աղստևի լեռնահովիտը, Կայան և Կայծոն բերդերով հանդերձ հանձնեց Պահլավունիներին[26]։ Սմբատ Բ-ն Կարսի թագավոր Մուշեղից խլեց Շատիկ ամրոցը։ Չնայած շուտով այն վերադարձվեց Մուշեղին, այնուամենայնիվ Կարսի Բագրատունիները ի վերջո կորցրեցին այն։ XI դ. 20-ական թվականներին Շատիկն անցել էր արքունիքին և պատկանում էր Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտ Դ-ի վասալներից մեկին[27]։ Հավատարիմ ծառայությունը հատուցվում էր պատիվներով և կալվածքներով։ Արդեն ասվեց, որ Պահլավունիներին տրվեց Կյուրիկյաններից խլված Կայանն ու Կայծոնը։ Սմբատ Ա-ն Վասպուրականի իշխան Աշոտին (Գրիգոր-Դերենիկի որդուն) ռազմական օգնության դիմաց խոստացել էր տալ քաղաքներ, դյուղեր, գավառներ[28]։

Ավելի փոքր ֆեոդալական տների ներկայացուցիչներն արքունիքում և տեղերում վարում էին տարբեր վարչական պաշտոններ։ Դրանցից կարելի է հիշատակել Նիգ գավառի տեր Գնթունիներին։ Հասան Գնթունին վարում էր մի պաշտոն, որը կոչվել է «հրամանատար տան արքայի», «իշխան և հրամանատար տերության արքայի», իսկ նույն տոհմից Վասակ և Աշոտ եղբայրները

20 Թովմա Արծրունի, էջ 300։
21 Մատթեոս Ուռհայեցի, էջ 17։
22 Ասողիկ, էջ 252—253։
23 Նույն տեղում, էջ 267, 270։
24 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 303—304, 314։
25 Նույն տեղում, էջ 144։
26 «Հավաքումն պատմության Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 98, Ասողիկ, էջ 280, Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 271։
27 Ասողիկ, էջ 188, «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 27։
28 Թովմա Արծրունի, էջ 327։

վերակացու և բերդապահներ էին Բագրատունիներին պատկանող Տաշիրում[29]։

Այդպիսի վերակացուներ էին նաև Մովսես իշխանը և Ցլիկ Ամրամը Տավուշում[30]։

Այս բոլորից հետո ծառանում է Բագրատունյաց թագավորության գնահատականի հարցը։ Հ. Մանանդյանի այն կարծիքը, որով ֆրանսիացի արեվելագետ Լորանի ազդեցությամբ Բագրատունյաց թագավորությունը որակվել է որպես թագավորական տիտղոս առանց թագավորական իշխանության, հիմնավորված չէ և մերժվում է սկզբնաղբյուրների տվյալներով։ X դ., գրում է Հ. Մանանդյանը, Հայաստանի բոլոր մեծ ֆեոդալները նույնպես դարձան «թագավորներ» և ունեին նույնպիսի թագավորական հանդերձանք և թագ, ինչպիսին ունեին Աշոտ Ա-ի հաջորդները[31]։ Հազիվ թե կարիք կա ապացուցելու, որ հարցի լությունը հանդերձանք ու թագ ունենալու մեջ չէր, չնայած այս առումով ևս Հ. Մանանդյանը նույնպես սխալվում է. Հայաստանում ոչ մի ֆեոդալ չի ունեցել «ամենայն Հայոց թագավորի» հանդերձանքը, բացի Բագրատունի գահերեցից, որը միաժամանակ խալիֆի կողմից ճանաչված էր «շահնշահ» և կրում էր համապատասխան տարազ՝ արաբական խալաթ և չալմա[32]։ Հ. Մանանդյանը նկատի ունի մի քանի գավառական թագավորությունների գահակալներին, որոնք X—XI դդ. իշխում էին Հայաստանի տարբեր մասերում, բայց նրանց չի կարելի հավասարեցնել «Հայոց թագավորին», միայն թագավորական տիտղոս կրելու պատճառով։ Նման մեկնաբանությամբ տեղի է ունենում մեխանիկական հավասարեցում տարբեր տիպի գահակալների միջև այն ձևական պատճառով, որ նրանք աղբյուրներում միանման հորջորջումով են հանդես գալիս։ X դ. շահնշահների և մյուս թագակիրների հողատիրության իրավունքի և ռազմատնտեսական կարողությունների միջև հողային տիրույթների մեծությունից կախված որոշակի տարբերություն է եղել, որը ծածկվել է ընդհանուր՝ «թագավոր» տիտղոսով։

Սյունյաց, Լոռվա կամ Կարսի թագավորները նշված ցուցանիշներով շատ էին զիջում շահնշահներին։ Բացի այդ, նրանց միջև կային ներքին տարբերիչ կողմեր, որոնք պայմանավորված էին տեղական առանձնահատկություններով։ Այսպես, Տաշիր-Զորափորում իշխող Կյուրիկյանները նույնիսկ երկրամասի հայրենատերերը չեն եղել, նրանք «Տաշիր երկիրը» (Լոռվա թագավորության տարածքը) ստացել էին արքունիքից՝ պայմանական-ժառանգական տիրության իրավունքով։ Այստեղ թագավորության կազմավորումից հետո էլ հողի գերագույն սեփականատերը Բագրատունյաց արքունիքն էր[33]։ Գավառական թագավորներից միայն Արծրունիներն էին, որ կարճ ժամանակամիջոցում փորձեցին մրցել Բագրատունիների հետ՝ «Հայոց թագավորի» թագին տիրանալու համար, այն էլ ապարդյուն։ Արծրունիներն անհաջողություն կրե-

---

29 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 179, 205, 295։

30 Նույն տեղում, էջ 301—303, 320—322։

31 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս. Բ, Երևան, 1960, էջ 34, 302, Նույնի՝ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 202—203.

32 С. Еремян, Присоединение северо-западных областей Армении к Византии в XI в. (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 3, էջ 6), «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 269։

33 Այդ մասին մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 3, և 1977, № 1։

ցին, որովհետև ռազմատնտեսական կարողությամբ չկարողացան գերազանցել Բագրատունիներին։ Խնդրո առարկա ժամանակաշրջանում (IX—XI դդ.) այդ ուժը հենվում էր ժառանգական հողատիրության և վասալական կապերի վրա, իսկ այդ չափանիշներով, ինչպես արդեն ասվեց, Հայաստանում ամենազորեղը Բագրատունիներն էին։ Վերը մենք տեսանք, որ Բագրատունի գահերեցները (շահնշահները) «ուխտերի» միջոցով համախմբել էին հայ ֆեոդալներին՝ վերջիններիս համար թագավորական իշխանությունը մի կենտրոն էր, որի հետ նրանք կապված էին «ծառայության լծով»։ Դրանով իսկ առաջ էին եկել դաշնակցային կապեր, որոնք երաշխավորված էին փոխադարձ պարտականություններով։ Այսպիսով, թագավորական իշխանությունը կատարում էր դաշնակցային կամ ֆեդերատիվ կենտրոնի դեր։ Թագավորական իշխանությունը (Բագրատունի գահերեց Շիրակ-Արշարունիքի ֆեոդալական տունը) նույնպիսի խոշոր հայրենատեր-հողատեր էր, ինչպիսիք էին Արծրունիները և մյուսները, բայց նրանց գերազանցում էր տնտեսական կարողությամբ և ռազմական զորությամբ։ Մյուս հայրենատեր-հողատերերը ճանաչում էին Բագրատունիների առաջնությունը ֆեոդալական սանդուղքում։ Դա առավել ակնառու արտահայտվեց նրանում, որ Արծրունիների և Սյունիների համաձայնությամբ ու աջակցությամբ Բագրատունի գահերեց Աշոտ իշխանը հռչակվեց «Հայոց թագավոր»։ Մասնագիտական գրականության մեջ նման խոշորագույն ֆեոդալը անվանվում է «առաջինը հավասարների մեջ» (Primus inter pares)[34]։ Պետականության առկայության պայմաններում նա գլխավորում է պետական իշխանությունը և իրավական ակտով ճանաչվում «թագավոր»։ Եթե ուրվագծենք Բագրատունի թագավորների դիրքը վասալական-սյուզերենական համակարգում, ապա կտեսնենք, որ Բագրատունյաց տոհմի ավագը IX—XI դդ. հայկական պետության սահմաններում վարում էր «Հայոց թագավորի» պաշտոնը, տոհմական տիրույթների շրջանակներում տոհմակիցների նկատմամբ նա գահերեց էր և ազգապետ, իսկ անձնական տիրույթներում՝ «տէր»։

Այսպիսով, Բագրատունիների թագավորական տիտղոսն արտահայտում էր այն իրավիճակը, որը գոյություն ուներ երկրի սոցիալ-քաղաքական կառուցվածքում և համազոր էր պետական իշխանությանը մի պետությունում, որը IX—XI դդ. իրենից ներկայացնում էր ֆեոդալական տների դաշնակցային կապ։

Այդ տեսանկյունից ճշմարտությանն ավելի մոտ են Լեոյի և ակադ. Ա. Հովհաննիսյանի կարծիքները։ Աշոտ Ա-ի ներքին քաղաքականության մի խոշոր գիծն այն էր, գրում է Լեոն, որ նա աշխատում էր ազգակցական կապերի վրա հիմնված մի ավատական դաշնակցություն ստեղծել իր իշխանության շուրջը[35]։ Ճիշտ բնութագրելով 862—890 թթ. Աշոտ Բագրատունու իշխանապետությունը որպես ֆեոդալական ֆեդերացիա (ավատական դաշնակցություն), Լեոն անհասկանալի պատճառով այդ ֆեդերացիան սահմանափակում է ազգակցական կապերով (նկատի ունենալով Աշոտ Ա-ի ազգակցությունը Արծրունիների և Սյունիների հետ) և չի վերլուծում վասալիտետը որպես ինս-

---

[34] Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 200, «Советская историческая энциклопедия», т. 4, стр. 652.

[35] Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1967, էջ 498։

տիտուտ։ Ակադ. Ա. Հովհաննիսյանը չհամաձայնվելով այլոց կարծիքին, որոնք Աշոտ Ա-ին համարել են բացարձակ միապետ, վերջինիս դիտում է որպես լոկ վասալական տիրույթների վրա գերիշխող թագակիր[36]։ Հեղինակը միանգամայն իրավացի է, որ Աշոտը (և ընդհանրապես Բագրատունի գահերեցը) թագավոր էր վասալական տիրույթների վրա, քանի որ թագը նրա իրավունքների ճանաչումն էր (խալիֆի) և հայ ֆեոդալների կողմից։ Բայց «լոկ թագակիր» արտահայտությունը երկիմաստ հեգնական երանգ է տալիս նրա խոսքերին, որ բոլորովին տեղին չէ։

Իհարկե, Բագրատունիները իշխում էին վասալական տիրույթների վրա։ Այդ դարաշրջանում՝ ֆեոդալական մասնատվածության և բազմաթիվ ինքնուրույն և կիսանկախ իշխանությունների առկայության պայմաններում, վասալիտետը իշխող դասակարգի համար քաղաքականապես կազմակերպվելու և համախմբվելու միակ միջոցն էր։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ IX—XI դդ. Հայաստանն ապրում էր մի շրջան, երբ ֆեոդալականացման պրոցեսի խորացման հետևանքով կենտրոնական իշխանությունը՝ թագավորն ինքը, մյուս ֆեոդալների նման, դարձել էր կալվածատեր։ Հելլենիստական շրջանի միասնական կենտրոնացած պետությունը, որի գլուխ կանգնած էր ինքնակալը կամ «անսահմանափակ միապետը»[37], վաղուց արդեն քայքայվել էր։ Արշակունյաց պետության երկրորդ շրջանից (III դ. վերջ IV դ. սկիզբ) ինքնակալին փոխարինել էր ֆեոդալ գերագույն սյուզերենը, որը գլխավորում էր վաղ ֆեոդալական միապետությունը[38]։ Այդ գերագույն սյուզերենը այլևս չէր կարող լինել բացարձակ միապետ կամ բռնապետ, ինչպես համարել են առանձին հետազոտողներ[39]։ Ֆեոդալիզմի զարգացման հաջորդ շրջանում, որը համընկավ Բագրատունիների տիրապետության հետ, ֆեոդալական դասակարգի քաղաքական կազմակերպությունը հարմարվեց նոր պայմաններին՝ անհատ բաժնետերերի ժառանգական հողատիրությանը։

Այդ պատմաշրջանում կապը ֆեոդալների և թագավորի միջև կարող էր իրագործվել միայն փոխադարձ պարտականությունների՝ վասալիտետի միջոցով, իսկ պետությունը կարող էր հանդիսանալ միայն իշխանությունների միություն՝ ֆեդերացիա։

Անշուշտ X—XI դդ. պատմության տարբեր էտապներում վասալական-սյուզերենական կապերը որոշ փոփոխություններ էին կրում՝ կախված տվյալ ժամանակահատվածում գավառատեր իշխանների և կենտրոնական իշխանության ուժի հարաբերակցությունից։ Այդ կապերը կարող էին լինել սերտ կամ ժամանակավորապես թուլանալ։ Դա առանձին հարց է և պահանջում է հատուկ քննություն, իսկ վասալական հարաբերությունների կառուցվածքի տեսակետից ըստ էության ոչինչ չէր փոխվում։ IX—XI դդ. քաղաքական և դասակարգային շահերը ֆեոդալ կալվածատերերին ստիպեցին փոխադարձ երաշ-

---

36 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմության. հ. 1, Երևան, 1955, էջ 122։

37 «Вопросы истории», 1951, № 7, стр. 55, А. Сукиасян, նշվ. աշխ., էջ 92, 215, 226, «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Երևան, 1971, էջ 667, 823։

38 «Вопросы истории», 1951, № 7, стр. 55, А. Сукиасян, նշվ. աշխ., էջ 183, 200, 206, 212, 214—215, 218—219, 229։

39 Հ. Հարությունյան, Հայաստանը 9—11 դդ., էջ 199, Ա. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 173, 183։

խավորությամբ կապվել միմյանց հետ, որի հետևանքով առաջ եկավ նրանց շահերի ռազմաքաղաքական երաշխիքը՝ ֆեդերատիվ հիմունքներով կազմակերպված Հայոց թագավորությունը։

ВАССАЛЬНО-СЮЗЕРЕННЫЕ ОТНОШЕНИЯ В БАГРАТИДСКОЙ АРМЕНИИ (X—XI вв.)

РАФАЕЛ МАТЕВОСЯН

Резюме

В X—XI вв. армянские княжеские фамилии — Арцруни, Сюни, младшие ветви Багратидов в Ташире, Тароне, Вананде и др. были связаны с Багратидским гаhерецом — царем Армении системой вассальных договоров («ухт»-ов) и признавали его верховенство. Государственное устройство армянского царства представляло собой союз княжеских домов во главе с Ширакскими Багратидами. Царь Армении являлся не формальным венценосцем (как ошибочно считал А. Манандян) или абсолютным монархом (А. Арутюнян, Х. Самвелян), а «первым среди равных»—главой феодальной иерархии, верховным сюзереном в масштабе всего государства, Багратидским «азгапетом» — главой Багратидского рода в пределах фамильных владений и «тер»-ом (сеньором) в личных владениях.